

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ԱՐՈՒՃ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիր

Կազմել է՝ համայնքի ղեկավար՝

Բազրատ Մարտիրոսյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 16.12.2016թ թիվ 34 որոշմամբ
(նիստի ամսաթիվը)

ԱՐՈՒՃ

2017 ԹՎԱԿԱՆ

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	4
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը.....	5
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը.....	6Ошибка! Закладка не определена.
2.4.Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները....	9
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....	14
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն.....	15
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	16
3.1. Համայնքի զարգացման տեսլական.....	16
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....	17
4. ՀՀԶԾ ֆինանսավորում.....	Ошибка! Закладка не определена.
5. ՀՀԶԾ մոնիթորինգ.....	Ошибка! Закладка не определена.

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք Հարգելի Արուճեցիներ

Արուճ համայնքը ունի բազմաթիվ խնդիրներ, առաջիկա հինգ տարիների ընթացքում նախընտրելի է լուծու մ տալ համայնքի հետագա զարգացման համար կարևորագույն խնդիրներին:

Արուճ համայնքի զարգացման հնգամյա ծրագրի (ԱՀԶՀԾ) մշակման հիմքում դրվել են Արուճ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի և դիրքորոշումների փոխհամաձայնեցված դրույթները համայնքի զարգացման ուղղությունների վերաբերյալ, որոնք վերաբերում են ավանդականին զուգահեռ ոչ ավանդական մշակաբույսերի մշակության, անասնապահության, տուրիզմի, նախադպրոցական կրթության և համայնքային այլ ծառայությունների մատուցման զարգացմանը:

Սույն ծրագիրը մշակվել է նկատի ունենալով համայնքի ֆինանսական կարողությունները, բնակչության թվաքանակը, համայնքի կազմում մեկ բնակավայր ընդգրկված լինելու հանգամանքը, համայնքում առկա ենթակառուցվածքը, համայնքի կողմից մատուցվող ծառայությունները և համայնքում առկա վտանգները:

ԱՀԶՀԾ-ն բաղկացած է 4 գլխից՝

- Համայնքի իրավիճակի նկարագրություն,
 - Նպատակների սահմանում և գործողությունների պլանավարում,
 - ՀՀԶԾ ֆինանսավորում,
 - ՀՀԾԶ մոնիթորինգ:
-
- Ծրագրի առաջին բաժինը նվիրված է համայնքի իրավիճակի նկարագրությանը, հիմնախնդիրների և կարիքների բացահայտմանը, վերլուծությանը և գնահատմանը, համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների ու վտանգների վերլուծությանը, ինչպես նաև համայնքի զարգացման միտումների նկարագրմանը:
-
- Ծրագրի երկրորդ բաժնում ձևակերպված են համայնքի տեսլականը, դրան հասնելու ռազմավարությունը առաջիկա հինգ տարիների ընթացքում և ծրագրի հիմնական նպատակները:
-
- Ծրագրի երրորդ բաժնում տրված է համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, առաջիկա հինգ տարիների ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը, որոնց սահմաններում պլանավորվելու են իրականացվելիք ծրագրերը:

- Ծրագրի չորրորդ բաժինը նվիրված է համայնքի տարածքում միջազգային և դոնոր կազմակերպությունների կողմից շարունակվող և նախատեսվող ծրագրերի ներկայացմանը:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

2.2 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Արուճ(նախկին Թալիշ) բնակավայրը կազմավորվել է 6-րդ դարից: Սակայն այն ավելի հին է, քան ենթադրվում է: Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 1200մ բարձրության վրա, զբաղեցնում է 2125.4 հա տարածք: Գյուղի աշխարհագրական դիրքը շատ նպաստավոր է, թե հաղորդակցման տեսակետից, քանի որ այն գտնվում է Երևան-Գյումրի մայրուղու ձախ կողմում, թե բնակլիմայական տեսակետից:

Արուճ գյուղը հնագույն, պատմական հարուստ անցյալ և միջնադարյան արժեքավոր ճարտարապետական հուշարձաններ ունեցող բնակավայր է: Կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Տեղումները երբեմն չափից ավելի քիչ են լինում, որից տուժում է գյուղացին:

Գյուղի բնակչությունը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 1235 մարդ, որոնցից տղամարդիկ կազմում են 629 մարդ, իսկ կանայք՝ 606:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1.	Երեխաներ 0-6 տարեկան	-142
2.	Դպրոցականներ 7-18 տարեկան	-183
3.	19 – 63 տարեկաններ	- 510
4.	Թոշակառուներ	-183
5.	Հաշմանդամներ	- 6
6.	Միակողմանի ծնողազուրկներ	-3
7.	ՀՄՊ վետերան	-1
8.	Արցախում զոհված ազատամարտիկի ընտանիքներ	-1
9.	Արցախյան ազատամարտի վիրավոր	-1
10.	Աշխատունակներ	-450
11.	Գործազուրկներ	-214
12.	Ընտանիքների թիվը	-341
13.	„Փարոս„-ում գրանցվածներ	-41
	Գրանցված ընտրողների թիվը	-862

3 .Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ-ի թիվ 51 որոշմամբ: Համայնքում առկա սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների ընդհանուր վիճակը կարելի է համարել բավարար, սակայն համայնքի զարգացման համար անհրաժեշտ է հետևողականորեն վերակառուցել, վերափոխել ենթակառուցվածքները: Համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների վիճակի գնահատումը տրված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների վիճակի գնահատում

Հ/հ	Կառույց	Հասցե	Կառուցման տարեթիվ	Մակերես (քառ. մ.)	Ընդհանուր վիճակի գնահատական	Նորոգման / վերականգնման / փոխարինման կարիք	Այլ նշումներ
1.	Գյուղապետարանի վարչական շենք	9փողոց շենք 4	1982	310.1	բավարար	Կապիտալ վերանորոգման	
2.	Մշակույթի տուն	1-ին փողոց շենք 3	1970	140	բավարար	-Կապիտալ վերանորոգում	
3.	Մանկապարտեզի շենք	3փողոց շենք 7	1985	1304	վթարային	Կապիտալ վերանորոգում-	
6.	Գերեզմանոց	1-ին-փողոց 17	-1960	30520	բավարար	-	
7.	Խմելու ջրի ջրագիծ		1977	երկարություն 16 կմ	բավարար	պարբերական վերանորոգումներ	
8.	Բուժամբուլատորիա	1-ին փողոց 2 նրբ 3	2002	230	բավարար	Կապիտալ վերանորոգում	

3.2 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի տարածքում գործում են՝ միջնակարգ դպրոցը, փոստը: Համայնքի անհատ ձեռներեցների կողմից շահագործվում են 5 խանութներ:

3.3 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Կենցաղային աղբի կուտակման համար համայնքից մոտ 2 կմ հեռավորության վրա առանձնացված է տարածք, որտեղ տեղափոխվում է համայնքի աղբը: Համայնքի փողոցները լուսավորված չեն հենասյունների և լարերի փոփոխությունների պատճառով, որը ընդգրկված է եղել դեռևս 2015թ-ի ծրագրով:

3.4 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում կան բազմաբնակարան բնակելի շենքեր: Բնակելի ֆոնդը բաղկացած է առանձնատներից, որոնց թիվը 278 է: Զգալի է առանձնատների կարիք ունեցող երիտասարդ ընտանիքների թիվը:

3.5 ՀՈՂՈԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը	- 2261.4 հա, որից՝
Բնակավայրի տարածքը	- 90,40 հա
այդ թվում կառուցապատվածը	- 90,40 հա
Հեռագնա արոտներ /տրված է համայնքին	
անհատույց օգտագործման իրավունքով/	- 0.0 հա
Վարելահողեր	- 709.80 հա
Խոտհարքներ	- 0.0 հա
Արոտավայրեր	- 0.0 հա
Տնամերձ հողեր	- 90.40 հա
Մեփականաշնորհված հողեր	- 499.31 հա
Մեկ հողաբաժնի չափը՝	- 0.85 հա
Դպրոց	- 0.8 հա
Հուշարձան	- 3.17 հա
Գերեզմանոց	- 3.72 հա
Վարձակալությամբ է տրված մոտ	-250.30 հա հողեր:

3.6 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի հողերն ջրովի են: Ազգաբնակչությունը հիմնականում զբաղվում է ցորենի, գարու, առվույտի, կորնզանի և բանջարաբուստանային կուլտուրաների և պտղի արտադրությամբ:

Անասնապահության բնագավառում հիմնականում պահում են կովեր, ոչխարներ, թռչուններ: Տարերային աղետների պատճառով հաճախացել է բերքի կորուստները : Խիստ կարիք կա գյուղ.

տեխնիկայի, որի ձեռք բերումը շատ դժվար է թանկ լինելու պատճառով: Համայնքում առկա տրակտորների թիվը 17-ն է, որոնց մոտ 95 տոկոսը հնամաշ է:

Համայնքում չի գործում հակակարկտային կայաններ, որոնք մեծապես ազդում են բերքի պահպանության հարցում:

3.7 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կան արհեստական լճակներ: Լճակներից օգտվում են համայնքի բնակիչները, կատարելով հողերի ոռոգում և անասուններին ջրելու համար: Լճակների մաքրությունը ապահովելու համար անհրաժեշտության դեպքում իրականացվում են մաքրման աշխատանքներ:

3.8 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի տարածքով է անցնում Երևան-Գյումրի միջպետական ճանապարհը, ինչպես նաև դեպի Նոր- Ամանոս տանող միջհամայնքային ճանապարհը, որոնք ասֆալտապատ են, սակայն կարիք ունեն վերանորոգման: Ասֆալտապատ ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 7.5 կմ: Ներհամայնքային ճանապարհները հիմնականում գրունտային են /մի մասը խճապատ/ որոնց ընդհանուր երկարությունը մոտ 8.2 կմ է:

Դաշտային ճանապարհները հողային են, որոնց վիճակը բավարար չէ:

3.9 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածքում գործում են անհատ ձեռներեցների պատկանող 5 խանութներ, որոնք հիմնականում փոքր խանութներ են և զբաղվում են խառը ապրանքների /սնունդ, հագուստ, տնտեսական ապրանքներ և այլն/ վաճառքով: Համայնքում գործող գրանցված ծառայություններ /վարսավիրանոց, կոշկակար և այլն/ չկան, և բնակչությունը օգտվում է մարզկենտրոնի ծառայություններից:

3.10 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղն ունի մեկ միջնակարգ դպրոց, որի շենքային պայմանները այսօրվա պահանջներին չեն բավարարում: Դպրոցում սովորում են 189 աշակերտներ: Դպրոցն ունի 35 ուսուցիչներ և տեխ սպասարկողանձնակազմ 4 հոգի:

Համայնքում 2010 թվականից գործում է նախակրթարան, որը տեղավորված է դպրոցի շենքում: Նախակրթարանն ունի 35 սաներ և 2 աշխատակիցներ:

3.11 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքի մշակույթային կյանքը աստիճանաբար մտնում է հունի մեջ: Ակումբի մասնակի վերանորոգումը մեծապես նպաստել է կուլտուր-մշակույթային կյանքի ակտիվացմանը: Մշակույթի

տունն ապահովված է համապատասխան գույքով,
ունի խաղասենյակ:

3.12 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՄՊՈՐՏ

Համայնքում գործում է մեկ բուժ. ամբուլատորիա, որը կառուցվել է 2002թվականին ,որտեղ առկա է համապատասխան գույք: Բուժ. ամբուլատորիան ունի մեկ բժիշկ և վեց բուժ. քույրեր:

Համայնքում սպորտի զարգացման համար նպաստավոր պայմաններ է ստեղծում դպրոցին կից կառուցված սպորտդահլիճը:

4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

4.1 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Արուճ համայնքի ֆինանսական կարողությունները մեծ չեն: 2017-2021թթ. համայնքի բյուջեի մուտքերի կանխատեսումները ներկայացված են ըստ՝ (աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Համայնքի 2017-2021թթ. բյուջեի մուտքերի կանխատեսումները (հազար դրամ)

Հ/հ	Մուտքերի անվանումը	2017թ. փաստ.	2018թ. նախատ.	2019թ. փաստ.	2020թ. նախատ.	2021թ. կանխ.
1	2	3	4	5	6	7
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	29348.8	29348.8	29348.8	29348.8	29348.8
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	29348.8	29348.8	29348.8	29348.8	29348.8
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	6809.2	6809.2	6809.2	6809.2	6809.2
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	4163.8	4163.8	4163.8	4163.8	4163.8
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	225.0	225.0	225.0	225.0	225.0
	Հողի հարկ	3938.8	3938.8	3938.8	3938.8	3938.8
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	2565.4	2565.4	2565.4	2565.4	2565.4
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	2565.4	2565.4	2565.4	2565.5	2565.5
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	80.0	80.0	80.0	80.0	80.0
	Տեղական տուրքեր	80.0	80.0	80.0	80.0	80.0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ					
	Պետական տուրքեր					

1.5	Այլ հարկային եկամուտներ					
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ					
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ					
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՆԵՐ	19432.6	19432.6	19432.6	19432.6	19432.6
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ					
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ					
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ					
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	19432.6	19432.6	19432.6	19432.6	19432.6
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ					
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)					
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ					
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ					
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)					
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ					
3.	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	3107.0	3107.0	3107.0	3107.0	3107.0
3.1	Տոկոսներ					
3.2	Շահաբաժիններ					
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	1607.0	1607.0	1607.0	1607.0	1607.0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	1607.0	1607.0	1607.0	1607.0	1607.0

	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ					
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ					
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր					
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում					
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ					
3.5	Վարչական գանձումներ					
	Տեղական վճարներ					
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ					
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ					
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից					
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ					
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից					
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ					
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ					
3.9	Այլ եկամուտներ*	1500.0	1500.0	1500.0	1500.0	1500.0
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր					
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից	1500.0	1500.0	1500.0	1500.0	1500.0

	մուտքեր					
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	1500.0	1500.0	1500.0	1500.0	1500.0
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)					
1.	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր					
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր					
	Շարժական գույքի իրացումից մուտքեր					
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր					
2.	Պաշարների իրացումից մուտքեր					
3.	Բարձրարժեքակտիվների իրացումից մուտքեր					
4.	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր					
	Հողի իրացումից մուտքեր	7000.0	7000.0	7000.0	7000.0	7000.0
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր					
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)					-
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)					
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ					
1.1	Արժեթղթեր					
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր					
	-հիմնական գումարի մարում					
1.2	Վարկեր					
	-վարկերի ստացում					
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում					
1.3	Փոխատվություններ					
	-բյուջետային փոխատվությունների ստացում					

	-ստացված փոխատվությունների գումարի մարում					
2.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ					
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն					
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր					
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր					
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում					
2.2	Փոխատվություններ					
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր					
	-փոխատվությունների տրամադրում					
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ նացրոդը					
2.4	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս					
2.5	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս					
2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում					
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը					
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ					
1.	ՓՈՒՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ					
1.1	Արժեթղթեր					

	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր					
	-հիմնական գումարի մարում					
1.2	Վարկեր					
	-վարկերի ստացում					
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում					
1.3	Փոխատվություններ					
	-փոխատվությունների ստացում					
	-ստացված փոխատվությունների գումարի մարում					

4.2 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՇԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքում մեծ է տարբեր մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն ունեցողների թիվը:
- Միջպետական մայրուղին անցնում է գյուղի կողքով և հնարավորություն է տալիս համայնքի բնակիչներին հաղորդակցվելու և առևտուր անելու Երևանի և Գյումրիի հետ:
- Գյուղը շատ հրապուրիչ վայր է տուրիզմի համար:
- Գյուղից մոտ 2,5-3 կմ հեռավորության վրա կա քարհանք, որը կարելի է օգտագործել:
- Խմելու ջրի մատակարարումը կենտրոնացված է, ինքնահոս կերպով ապահովված է գյուղի թաղամասերը:
- Գյուղում կա 4-5րդ դարի ամրոց –միջնաբերդ, 5-7 ռդ դարի Սուրբ Գրիգոր/Կաթողիկե/ եկեղեցի, 12-րդ դարի քարավանատուն,:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Մեծ է բնակարանի կարիք ունեցողների թիվը:
- Մեծանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը:
- Բարձր է գործազրկության մակարդակը:
- Գյուղացու եկամուտները շատ ցածր են, կապված հողերի ոչ բավարար ու ճիշտ մշակմամբ, ինչպես նաև պարբերաբար կրկնվող բնակլիմայական աղետներով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են գյուղատնտեսությունը /դաշտավարություն, անասնապահություն/, ինչպես նաև հնարավոր է զարգացնել տուրիզմը /օգտագործել բնության գեղեցկությունը, պատմամշակութային կոթողներով հարուստ լինելու հանգամանքը, ինչպես նաև համայնքի աշխարհագրական դիրքը/: Համայնքում զբաղվում են պտղի մշակմամբ/ծիրան, խնձոր, խաղող/: Դրան կարող է նպաստել համայնքում առկա խորը սառեցման սառնարանը, որտեղ կպահպանվի պատրաստի արտադրանքը:
- Համայնքի զարգացման վրա ազդեցություն կարող է ունենալ նաև մեծ աշխատուժի առկայությունը, ԲՈՒՀ-ական և միջն. մասն. կրթությամբ մասնագետների մեծ թիվը, համայնքում գործող տարբեր խմբերի և կազմակերպությունների առկայությունը:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՅՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Տարերային բնական աղետները:

- Բնակչության սոցիալ-տնտեսական վատ վիճակը, որի հետևանքով հնարավոր է բարձրանա արտագաղթի, գործազրկության մակարդակները:
- Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները, որը մեծ վտանգ է ստեղծում բյուջեի կատարման համար:
- Վարելահողերի մի մասի չմշակելու հետևանքով հողերի որակի վատացումը և այլն:

5. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

5.1 Համայնքի զարգացման տեսլական

Արուճ համայնքի տեսլականն է՝

Հետևողական բարեփոխումների շնորհիվ համայնքը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և բարեկեցիկ բնակավայր, որտեղ առկա կլինեն զարգացած գյուղատնտեսությունը /ընդուպ մինչև օրգանական գյուղատնտեսություն, ավանդականին զուգահեռ ոչ ավանդական մշակաբույսերի մշակություն, անասնապահություն/, գյուղ. ապրանքների վերամշակումը, ինչպես նաև տուրիզմը:

Վերը նշված տեսլականին հասնելու համար համայնքի ՏԻՄ-ը և աշխատակազմը իրականացնելու են հետևյալ ռազմավարությունը: Իրականացվելու է այնպիսի համայնքային քաղաքականություն, որի շնորհիվ հետևողականորեն կբարելավվեն համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, կընդլայնվեն համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների շրջանակները և կբարձրացվի դրանց հասանելիությունն ու մատչելիությունը, զարգացում կապրի տուրիզմը՝ դրա համար կստեղծվեն նպաստավոր պայմաններ: Կյանքի են կոչվելու պատշաճ կառավարման սկզբունքները: Հատկապես շեշտը դրվելու է տեղական ժողովրդավարության ամրապնդման, հիմնախնդիրներին արձագանքելու պատրաստակամության, հրապարակայնության և թափանցիկության, անբասիր վարքի ապահովման, հստակ ֆինանսական կառավարման, սոցիալական միասնության ապահովման, բնակչությանը իրազեկման, որոշումների կայացմանը բնակիչների մասնակցության ապահովման և հաշվետվողականության բարձրացման մեխանիզմների ներդրմանը և հետևողականորեն դրանց իրականացմանը:

Հնգամյա ժամկետում բարեփոխումներ կատարելով նախատեսվում է համայնքում հասնել հետևյալ հիմնական նպատակներին՝

- Նախադպրոցական կրթության զարգացում:
- Բուսաբուծության և անասնապահության զարգացում:
- Գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման կազմակերպում, ջերմոցային տնտեսության հիմնում:
- Համայնքային ծառայությունների մատուցման բարելավում:
- Համայնքի բնակչության մշակութային կյանքի, սպորտի և հանգստի կազմակերպում:

- Ազգաբնակչության փոստային ծառայությունների ապահովում, պայմանների բարելավում:
- Դպրոցի շենքային պայմանների ընդլայնմամբ հասնել ուսումնական պրոցեսի պայմանների բարելավման:
- Գործարար միջավայրի բարելավում:

Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

5.2 ՀԱՄԱՍՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՅՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՈՒՄ

Համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքում բացահայտված հիմնախնդիրների լուծման ուղղությամբ առաջարկվում է աղյուսակ 3-ում բերված ծրագրերը:

Աղյուսակ 3. ՀԶՀԾ-ում ընդգրկելու համար առաջարկվող ծրագրերի ցանկ

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)
1.	Փողոցների վերանորոգում	3000,0-5000,0
2.	Ոռոգման ջրագծի մի հատվածի կառուցում	3000.0- 5000.0
3.	Մրգերի չրանոցի կառուցում	15000.0-20000.0
4.	Մանկապարտեզի գործունեության ապահովում	20000.0-22000.0
5.	Համայնքի փողոցների լուսավորության ցանցի կառուցում և սպասարկում	4000.0 – 6000.0-

5.3 ՀԶՀԾ _Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Սահմանափակ ֆինանսական ռեսուրսների պայմաններում կարևոր է որոշել ծրագրերի առաջնահերթությունները և առանձնացնել այն ծրագրերը, որոնք տեղ կգտնեն ՀԶՀԾ-ում և կֆինանսավորվեն:

Ծրագրի խնդիրները: Ծրագրի խնդիրները համայնքի գործունեության հետ առնչվող խնդիրներն են տարեկան կտրվածքով՝ կապված համայնքային քաղաքականության իրականացման, համայնքի ֆինանսների կառավարման, ծառայությունների մատուցման հետ: Վերը նշված ծրագրերից համայնքը իր ֆինանսական միջոցներով կարող է իրականացնել փողոցների վերանորոգումը, ոռոգման ջրագծի վերանորոգումը և փողոցների լուսավորության ծրագրերը: Մնացած ծրագրերը իրականացնելու համար անհրաժեշտ են դնոնր կազմակերպություններ ,պետության աջակցություն կամ դրսից հովանավորներ:

ՀՀԶԾ – Ի հիմնական նպատակն է համայնքի բնակչությանը ապահովել աշխատատեղերով , որպեսզի երիտասարդությունը կառչած լինի իր հողին և չլքի իր հայրենի համայնքը:

